

ԵՐՈՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆԻ

«ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ»Ը

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՑԵԱՆ

Հայագիտութեան մէջ լայն հետազոտութիւնների արժանացած թեմա է հայ վաղ միջնադարեան պատմագիրներ Մովսէս Խորենացուց եւ Անանուհից (Կեղծ Սեբէոս) յայտնի Արա Գեղեցիկի եւ Շամիրամի ականդութիւնը, որին անդրադարձել են թէ՛ հայ, թէ՛ այլազգի գիտնականները: Նուազ ուսումնասիրուած, բայց ոչ պակաս ուշադրաւ նիւթ է տրամադրուի նաեւ ազգագրագէտ-բանահաւաք Երուանդ Լալայեանի (1864-1931) գրառած «Արա Գեղեցիկ ականդավէպ»¹, որն իր բովանդակութեամբ, լոյս է սփռում ոչ միայն հայ, այլեւ մի շարք այլ ժողովուրդների հնագոյն դիցաբանական ըմբռնումների վրայ: Աւանդավէպը պատմել է Ուզունյար գիւղում ապաստանած հարիւրամեայ ծերունի, կարնեցի Սահակ Սահակեանը, որն էլ իր հերթին զրոյցը լսել է Մուշ քաղաքում: Աւանդավէպը գիտական բացառիկ արժէք է ներկայացնում եւ աւելին է քան պատմական դէպքերի ու ժամանակների արձագանգը:

Զրոյցն ասում է.

Մոտուրում ապրող Արամ թագաւորի կրտսեր որդի Արա Գեղեցիկը գնում է Շամիրամի մօտ՝ հօր աչքերի կուրութիւնը բուժելու համար դեղ բերելու: Նրան հետեւում են երկու եղբայրները: Ծանապարհին, նա հանդիպում է մի բերդում փակուած, խազալ անունով աղջկայ, որին առեւանգել էր դելը: Սպանում է դելին եւ խազալին կնութեան տալիս աւագ եղբօրը: Եւս մէկ դելի է սպանում: Ազատում է նրա բանտարկած հօրի հրեղէն աղջկան եւ տալիս միւս եղբօրը: Սպանում է էլի մէկ դելի եւ ազատում գեղեցկուհի Զուարթին: Վերջինս պատմում է պատմութիւնը Հաւլունի թրի, որը սկզբում մի երկաթ է եղել: Սրանով խփել են կովին եւ ծակել-անցել է: Զուարթի հայրը դարբնի մօտ, դրանից թուր է սարքել տուել: Շամիրամը ձգտել է ձեռք բերել այդ թուրը, բայց չի կարողացել: Նա դելին յանձնարարել է առեւանգել Զուարթին, որպէսզի յետոյ նրա հայրը՝ որպէս փրկագին, թուրն առաջարկի աղջկայ փոխարէն: Եւ ահա, Արան եկել, սպանել է դելին եւ ազատել Զուարթին: Մեռնելու օրը, աղջկայ հայրը որդիներին պատուիրել էր թուրը ծովը գցել: Երբ գցել էին, գազաններ ու ձկներ էին նետուել ջրից դէպի վեր:

Արան Զուարթին հարսնացու է ընտրում իր համար: Զուարթը խորհուրդ է տալիս հանդիպել մի ալեհեր ծերունու եւ նրանից իմանալ Շամիրամից դեղ բերելու գաղտնիքը: Ծերունին՝ Շամիրամի ապարանքը տանող ճանապարհը հսկող չորս դեւերից մէկը լինելով հանդերձ, համակրանքով է լցւում դէպի Արան եւ պատուիրում է չհրապուրուել պչրուհու թովչանքով ու չմօտենալ նրան: Սակայն Արան՝ Շամիրամի հմայքին չդիմանալով, մի համբոյր է դրոշմում նրա այտին, երբ քնած էր, մատանին դնում է մատը, դեղը վերցնում ու հեռանում:

Առաւօտեան, Շամիրամն արթնանում է եւ մատանու վրայ կարդում. «Արա Գեղեցիկ, որդի Արամ թագաւորի»: Այնուհետեւ զօրք է պատրաստում Արամ թագաւորի դէմ գնալու համար:

Տունդարձի ճանապարհին, եղբայրները նախանձից Արային գցում են ջրհորը եւ իրենք՝ դեւերից փրկուած աղջիկների հետ, շարունակում ճանապարհը:

Արային փրկում է ինչ-որ վաճառական եւ բերում նրա հօր մօտ:

Շուրջ 10 օր յետոյ Շամիրամը յայտնում է իր զօրքով: Արան հօրն ասում է թէ մէնակ կը գնայ նրա մօտ բանակցելու: Երեսուն անգէն զինուոր է առնում իր հետ եւ ուղեւորւում Շամիրամի ճամբարը: Վերջինս գերում է նրան եւ հեռանում դէպի Վան:

Երեք տարի Արան մնում է Շամիրամի մօտ: Երեք տարին Արամ թագաւորի եւ Զուարթի համար երեք դար է թւում, այնքան են թախծում նրա կարօտից: Նամակ են ուղարկում Արային, որը կարդալով, Արան ծպտուած փախչում է Շամիրամի մօտից: Երբ գալիս է, հարսանիք են անում իր եւ Զուարթի համար:

Ժամանակն աշուն է լինում: Մինչեւ ձմեռ, Արան պատրաստւում է պատերազմի: Գարնանը, զօրքն առնում, շարժւում է դէպի Վան: Շամիրամն էլ իր կողմից շարժւում է Արայի վրայ: Բախում են Սասունի սահմանում: Խլաթի մօտ Շամիրամի ուժերը նեղն են ընկնում, սակայն՝ հակազդողի անցնելով, փախուստի են մատնում Արայի զօրքերին:

Արան ընկնում է մարտում, թէպէտ Շամիրամը պատուիրել էր չսպանել «երկար մագերով, բարձրահասակ եւ անման» իր սիրեցեալին: Շամիրամն ինքն է փնտռում եւ գտնում Արայի «հսկայ դիակը»: Երեք օր շարունակ իր պալատում գրկում է նրան եւ ողբում, ապա մեծ շուքով տանում եւ թաղում է:

Լալայեանի գրառած այս պատումի ապշեցուցիչ զուգահեռներն առաջին հերթին, նկատում ենք դադատանեան «Երեք եղբայր եւ Շահ-Դշտուհի» հեքիաթում²: Բովանդակութիւնը հետեւեալն է.

Հին ժամանակներում, մի մարդ էր ապրում, որը ծերութեան հասակում կորցնում է տեսողությունը: Գալիս են երեք որդիները եւ հարցնում թէ ո՞րն է նրա աչքերի դեղը, որ գնան, գտնեն եւ բերեն: Հայրը պատասխանում է.

- Շահ-Դշխուհու այգու պտուղներն են իմ աչքերի դեղը:

Աւագ որդին ճանապարհ է ընկնում եւ հեռու աշխարհներում հանդիպում մի ծերունու, որը ճաքճած ճանապարհն էր կարկատում:

- Ես քեզ յաջողութիւն կը մաղթէի,- ասում է,- բայց ի՞նչ յաջողութիւն յիմար աշխատանքին:

- Դէ ի՞նչ, թող քեզ էլ յաջողութիւն չլինի,- պատասխանում է ծերունին:

Աւագ որդին գնում, գնում, մի հրաշք այգի է տեսնում՝ հրաշք պտուղներով: Մտածում է թէ դա է հենց Շահ-Դշխուհու այգին: Խուրջինները լցնում է զանազան պտուղներով եւ վերադառնում հօր մօտ: Բայց հայրն ասում է թէ այդ այգին իրեն ծանօթ է դեռ ջահել տարիներէից, բայց ի՞ր ուզածը չէ:

Ճանապարհ է ընկնում միջնեկ որդին: Սա էլ գնում, հանդիպում է ճանապարհը կարկատող ծերունուն եւ նրան երջանկութիւն չի ցանկանում իր «յիմար աշխատանքի» մէջ: Սա էլ մի հրաշք այգուց պտուղներ է բերում հօրը, բայց այդ այգին էլ, դուրս է գալիս, որ նրա ուզածը չէ:

Ճանապարհ է ընկնում կրտսեր որդին, որը ճանապարհը կարկատող ծերունուն հանդիպելով, ասում է.

- Տեսնում եմ, դու մտահոգում ես ճամբորդների մասին: Թող քեզ յաջողութիւն լինի աշխատանքիդ մէջ:

Ծերունին սովորեցնում է նրան թէ ինչպէ՛ս գտնի Շահ-Դշխուհու այգին եւ ինչպէ՛ս այնտեղից պտուղներ քաղի:

- Կ'անցնես,- ասում է,- կաթի, իւղի եւ մեղրի գետերով, կը տեսնես բիւրեղապակէ, արծաթէ եւ ոսկիէ աշտարակներ: Դա Շահ-Դշխուհու պալատն է: Կը գտնես երկաթէ դարպասներ, որոնք կախարդուած են: Ով դիպչում է դրանց, մեռած ընկնում է: Փայտի ծայրին երկաթէ մեխ ամրացրու եւ դրանով բացիր դարպասները: Երբ մտնես այգի, ոտքերդ կապոտիր փափուկ խոտերով, որ պահակները ոտնահետքերդ չնկատեն: Պտուղներին ձեռքով չդիպչես, թէ չէ ծառերն իրենց ճիւղերով կը խեղդեն քեզ: Փայտով քաշիր:

Կրտսեր որդին վարւում է ծերունու խորհուրդների համաձայն: Տուն դառնալուց առաջ, շատ է ուզում տեսնել Շահ-Դշխուհուն: Մտնում է նրա պալատը եւ տեսնում, որ գեղեցկուհին քնած է ոսկէ անկողնում: Ճակատին աստղ է փայլում: Ուտում եւ խմում է սեղանին դրուած խորտիկներից ու գինուց, ապա արմատէ մատանին դրնում է Շահ-Դշխուհու մատն ու հեռանում: Պտուղները բերում, տա-

լիս է հօրը, որն ուտում եւ վերստանում է իր տեսողութիւնը: Վերանում են միւս հիւանդութիւնները:

Առաւօտեան, Շահ-Դշխունին արթնանում է եւ տեսնում մատին դրուած մատանին: Կախարդական հայելուց հարցնում է թէ ո՛վ է եղել իր մօտ եւ իմանում քաջ տղայի մասին: Եօթ թագաւորութեան է տիրած լինում Շահ-Դշխունին: Հաւաքում է բոլոր զօրքերը եւ պատերազմի գնում այն երկրի վրայ, որտեղ ապրում էր տղան՝ իր հօր եւ եղբայրների հետ: Երբ տեղ է հասնում, վրան է խփում ու պահանջում, որ ներկայանայ նա՝ ով եղել է իր այգում: Սկզբում գալիս է տղայի աւագ եղբայրը: Շահ-Դշխունին հարցնում է.

- Ինչպէ՞ս քաղեցիր պտուղները:

- Զեռքերով, - պատասխանում է երիտասարդը:

Թագունին հրամայում է դուրս վռնել նրան: Վռնում է նաեւ միջնեկ եղբօրը: Երբ ներկայանում է իր փնտռած երիտասարդը, համոզում է որ նա է եղել իր այգում, զօրքի առջեւ երեք անգամ համբուրում է նրան եւ ամուսնանում հետը: Այդպէս նրանք ապրում են երկար եւ բախտաւոր:

Ինչպէս տեսնում ենք, այս հեքիաթը, թէեւ իր ձեւային որոշակի փոփոխութիւններով, ակնյայտօրէն բարոյախօսական խնդիրներ է հետապնդել, այնուամենայնիւ «Արա Գեղեցիկ աւանդավէպ»ի հետ ունեցած սիւժետային յենքը պահպանել է՝ միայն այն հիմնական տարբերութեամբ, որ «տեսողութեան դեղի» տիրունին (Շամիրամը) վերջում ո՛չ թէ պատերազմում է հերոսի դէմ, այլ ամուսնանում նրա հետ:

Հայկական աւանդավէպի սիւժէն՝ որոշակի լրացումներով, առկայ է նաեւ ռուսական «Կտրիճ երիտասարդի, երիտասարդացնող խնձորների եւ կենդանի ջրի հեքիաթի» ութ տարբերակներում, որոնք գրի է առել բանագէտ Ա. Ն. Աֆանասեւը³: Այդ տարբերակներից յարադրման կարգով դուրս բերուած առանցքային մոտիւի համաձայն, նոյնպէս վատառողջ, կուրացած ծերունի արքայ Եֆեմիանի երեք որդիները հօր համար ճանապարհ են ընկնում հեռաւոր մի թագաւորութիւն, որի թագունհու այգում աճում է հրաշք խնձորենին, իսկ ջրհորում կենդանի ջուր կայ: Մի տարբերակում թագունհու («չարմաղ աղջկայ») ոտքերից եւ ձեռքերից 30 տարով երիտասարդացնող ջուր է հոսում: Ինքը գեղեցկուհիներից կազմուած իր զօրքի հետ միասին 9 օր քնում է, յետոյ արթնանում: Նրա մօտ ուղեւորուող արքայազններից երկու աւագները խելօքի համարում ունեն, կրտսերը՝ յիմարի (խենթի՝ ծուռի, ինչպէս հայկական հպոսի Սասնայ տան հերոսները): Գրեթէ բոլոր տարբերակներում էլ պատմում է, որ աւագ եղբայրները հրապուրւեցին ճանապարհին հանդիպող գեղեցկուհիներով, մոռացան ուղեւոր-

րութեան նպատակի՝ իրենց վերադարձին սպասող հօր մասին ու գերի դարձան պչրուհիների ոռոգայթներին: Կրտսեր որդին արհամարհում է այդ կանանց: Հանդիպում է հրաշք այգին տանող ճանապարհը հրսկող «բաբայագա» քոյրերին եւ նրանց խորհուրդներով, ինչպէս նաեւ նրանց տուած ձիերով (կամ արծիւներով) հասնում է թագուհու ապարանքը: Քաղում է երիտասարդացնող խնձորները, վերցնում կենդանի ջուրը, համբուրում է քնած թագուհուն, իր մատանին դնում նրա մատը, նրա մատանին՝ իր, դիտմամբ կամ անզգուշօրէն արթնացնում է նրան ու հապճեպ բռնում տունդարձի ճանապարհը: Վերադարձին հանդիպում է անյաջողութեան հանդիպած եղբայրներին, փրկում նրանց, սակայն վերջիններս՝ նախանձից, իրենց կրտսեր եղբօր գցում են հորը (կամ ջրհորը) եւ հայր արքային յայտարարում թէ իրենք են ձեռք բերել խնձորներն եւ կենդանի ջուրը: Կրտսեր արքայազնը հորի մէջ գահավիժում է 3 օրուայ ընթացքում, ապա ընկնում ստորգետնեայ մուկ աշխարհ, որտեղ մարդիկ գործ ունեն կրակի հետ եւ շատ տխուր են: Վիշապը (կամ վիշապները) պէտք է խժեռն տեղի արքայադստերը (կամ արքայադուստրերին): Տղան սպանում է վիշապներին եւ փրկում նրանց: Որպէս երախտիքի արտայայտութիւն, արքան կարգադրում է ճանապարհի ուստեստ պատրաստել արծուի համար, որն էլ հերոսին լոյս աշխարհ է դուրս բերում: Գալիս է թագուհին՝ իր զօրքով եւ պահանջում յանձնել մեղաւորին՝ նրան, ով գողացել էր իր այգու խնձորները եւ կենդանի ջուրը: Արքայի աւագ որդիները փորձում են իրենց ներկայացնել կրտսեր եղբօր փոխարէն, սակայն թագուհին՝ ճանաչելով, վռնդում է նրանց: Ծանաչում է նաեւ իրական հերոսին: Յետոյ երկուսով գնում են արքայի մօտ, պատմում իրողութիւնը, ամուսնանում ու մինչեւ խոր ծերութիւն ապրում երջանիկ:

Ներկայացուած սիւեթները նորանոր մանրամասներով դրսեւորւում են հայկական «Անմահական խնձորը» հեքիաթում, որը Վաղարշապատից գրի է առել բանահաւաք Տիգրան Նաւասարդեանը (1861-1927)⁴: Հեքիաթը, որում հրաշք պտուղը (խնձորը) թէեւ օտար եգիպտացի է, այլ հենց թագաւորի այգում, այնուամենայնիւ մեծապէս լրացնում է մեր պատկերացումները Լալայեանի գրառած աւանդավէպի ակունքների վերաբերեալ: Հեքիաթի համառօտ բովանդակութիւնը հետեւեալն է.

Մի թագաւորի պալատի այգում անմահական խնձորի ծառ է աճում, բայց թագաւորը ոչ մի անգամ չի կարողանում համտեսել պտուղը: Հենց հասնելու պահը գալիս է, տեսնում է խնձորը չկայ: Թագաւորի երեք որդիները որոշում են հսկել եւ բռնել գողին: Աւագը եւ միջնեկը երկու տարի, հերթով պառկում են ծառի տակ, բայց լուսադէմին,

երբ ուր որ է պտուղը պէտք է հասունանար, քունները տանում է եւ քնում են: Առաւօտեան, դարձեալ ձեռնունայն են մնում: Յաջորդ տարի, կրտսեր որդին մատը կտրում է, վրան աղ լցնում, որ չքնի եւ դրան է մտնում ծառի տակ: Առաւօտեան տեսնում է գողը դեւ է. եկաւ, բարձրացաւ ծառը, որ խնձորն ուտի: Տղան նետով զարկում, ցած է գլորում նրան: Մօտենում է, որ մէկ էլ խփի, բայց դեւը փախչում է, ապա գնում, դրմփալով ընկնում է մի խոր փոսի մէջ: Նրա ետեւից ընկած տղան կռանում եւ տեսնում է, որ փոսը յատակ չունի: Այդ տեղը նշան է անում, վերադառնում, խնձորը քաղում եւ տանում է հօրը: Արքան երեք որդիներին ուղարկում է դեւի ետեւից: Հասնում են եւ մեծ եղբօրն իջեցնում ներքեւ: Բայց նա՝ մի քիչ իջնելով, բղաւում է.

- Այ, հարա՛յ, ես եփուեցի, քաշէք:

Միջնեկ եղբօրն են կախ տալիս: Նա էլ է բացականշում:

- Այ, հարա՛յ, էրուեցի, խաշուեցի, քաշէք:

Երբ փոքր եղբօր հերթն է հասնում, պատուիրում է.

- Որ ասեմ՝ էրուեցի, խորովուեցի, դուք ականջ չէք անի՝ հա կախ կը տաք, ընչանք հասնեմ:

Այդպէս էլ վարւում են: Փոքր եղբայրը հասնում է հորի յատակին եւ մի դուռ տեսնում: Մտնում է ներս ու հանդիպում «հօւրի մալաք (հրեշտակ - Գ.Մ.)» աղջկայ, որը նստած, քարգահ է անում: Կողքը դրուած է ոսկէ սինի, մէջը՝ ոսկէ աղուէս եւ ոսկէ շուն, որն՝ աղուէսի ետեւից ընկած, ուզում է բռնի: Եօթ-գլխանի դեւն էլ գլուխը դրել է աղջկայ ծնկներին եւ քնել: Աղջիկն ասում է.

- Այ տղայ, օձն իր պորտովը, դուչն իրա թեւովը չի կարացէ ըստերանք գայ, դու ո՞նց ես սիրտ արէ, էկէ:

- Քո սէրն ա բերէ,- պատասխանում է տղան, ապա թուրը հանում, դեւի եօթ գլուխներն էլ թուցնում է:

Տղան՝ աղջկայ խորհրդով, մտնում է յաջորդ սենեակ, ուր դեւն աղջկայ առեւանգուած միջնեկ քրոջն էր պահում: Սա նոյնպէս հօւրի մալաք է, մեծ քրոջից՝ աւելի սիրուն: Քարգահ է անում, կողքը՝ ոսկէ սինի, մէջը՝ ոսկէ հաւ եւ ոսկէ աքլոր: Տասներկու-գլխանի դեւը գլուխը դրել է աղջկայ ծնկանը եւ քնել: Տղան թուրը քաշում, սրա 12 գլուխներն էլ է թուցնում: Միւս սենեակում տեսնում է քոյրերից ամէնագեղեցիկին: Նա էլ է քարգահ անում: Կողքին ոսկէ սինի կայ, մէջը՝ ոսկէ կաքաւ եւ մադա՝ իրար հետ խաղ անելիս: Քսանչորս-գլխանի դեւն էլ գլուխը դրել է աղջկայ ծնկանը եւ քնել: Տղան խփում, դեւի 24 գլուխն էլ թուցնում է: Աղջիկը փաթաթւում է տղայի վզին եւ նրան մի թալիսման է տալիս, որը չախմախին տալու դէպքում նրա եւ նրա քոյրերի ոսկէ սինիները պէտք է յայտնուէին առջեւ: Գոմից դուրս է բերում սեւ, սպիտակ եւ կարմիր ձիերի ու պատուիրում ամէն մէկից մի մագ

պոկել, որոնք կրակի տալու դէպքում, ձիերը պէտք է յայտնուէին: Ապա տղան գնում է հորի մօտ եւ եղբայրներին ձայն տալիս, որ հանեն իրենց: Եղբայրները դեւերի հարստութիւնն ու աւագ քոյրերին դուրս են քաշում: Մնում են փոքր քոյրն ու փոքր եղբայրը: Աղջկայ սիրտը վկայում է, որ տղայի եղբայրները տմարդութիւն պէտք է անեն եւ նրան թողնեն հորի մէջ: Խորհուրդ է տալիս նման բան պատահելու դէպքում, Ուրբաթ օրը գնալ, նստել աղբիւրի մօտ: Երեք ոչխար կը գան ջուր խմելու, մէկը՝ սեւ, մէկը՝ սպիտակ, միւսը՝ կարմիր: Տղան պէտք է իրեն գցի սեւ ոչխարի վրայ, սա նրան կը գցի կարմիրի վրայ, կարմիրն էլ՝ սպիտակի, սպիտակն էլ նրան լոյս աշխարհ կը հանի:

Երբ եղբայրները փոքր քոյրը հանում են հորից, զարմացած են մնում նրա գեղեցկութիւնից: Փոքր եղբօրը նախանձելով, ինչպէս նաեւ իրենց հօր առջեւ ամաչելով նրա քաջագործութիւններից, նրան թողնում են հորի մէջ եւ իրենք հեռանում: Գալիս, հօրն ասում են թէ փոքր եղբօրը դեւերը կերան:

Տղան վարւում է աղջկայ խորհրդի համաձայն, բայց՝ սխալուելով, սկզբից սեւ ոչխարի վրայ ընկնելու փոխարէն, ընկնում է սպիտակի վրայ: Սա էլ նրան գցում է կարմիրի վրայ, կարմիրն էլ՝ սեւի, սեւն էլ տղային գցում է մութ աշխարհ: Պարզում է, որ այս աշխարհում եօթ գլխանի վիշապը փակել է աղբիւրի ակը եւ մարդիկ ցեխանման, պղտոր ջուր են խմում: Մի փոքր ջուր է թողնում միայն այն ժամանակ, երբ աղջիկ են տալիս՝ ուտելու: Այդ ժամանակ, հերթը հասած է լինում թագաւորի աղջկան: Տղան արքայադստեր հետ գնում է վիշապի մօտ եւ թուրը հանում, նրա եօթ գլուխն էլ թռցնում է: Երիտասարդ թագաւորը որոշում է պարգեւատրել հերոսին եւ առաջարկում է մտքով անցածն ուզել: Տղան խնդրում է լոյս աշխարհ հասցնել իրեն, բայց այս մի բանը թագաւորի ուժերից վեր է լինում: Խորհուրդ է տալիս դիմել «գմուտս դուշին», որն ամէն անգամ գանգատւում է թէ իր ձագերին սպանում են, բայց չգիտէ թէ ո՛վ:

Տղան գնում, գտնում է թռչունի բոյնը եւ պահակ կանգնում ծառի տակ: Երբ տեսնում է վիշապը եկաւ փաթաթուեց ծառին եւ բարձրանում է դէպի բոյնը, կտոր-կտոր է անում նրան եւ գցում ձագերի առջեւ: Ինքը պառկում է ծառի տակ եւ քնում: Գալիս է «գմուտս դուշը», տեսնում է տղային եւ կարծում թէ նա է ամէն անգամ իր ձագերին սպանողը: Ուզում է ծուլէն-ծուլէն անի, բայց ձագերը չեն թողնում: Զմուտս դուշը թէեւ ծերացած էր, բայց խոստանում է՝ տղայի լաւութեան դիմաց, նրան լոյս աշխարհ հասցնել: Պատուիրում է թագաւորից քառասուն «թուլուխ» ջուր, քառասուն հատ էլ գառան դմակ խնդրել՝ ճանապարհի համար: Տղան բերում է նրա ուզածը եւ թռչնի թեւերի վրայ դուրս գալիս մութ աշխարհից: Լոյս աշխարհում նա մի

հովուի է հանդիպում եւ իր արքայական շորերը փոխանակում նրա ցնցոտիներին հետ: Գալիս, հասնում է իր թագաւոր հօր քաղաքը եւ ոսկերչի մօտ աշակերտութեան մտնում:

Մինչ այդ, հայրը, որ կասկածում էր թէ իր աւագ որդիները կըրտսերի գլուխը կերել են, սկսում է փնտռել նրան, բայց չի գտնում: Ի վերջոյ, աւագներին պսակում է կրտսերի փրկած քոյրերի հետ: Նրանց փոքրը, սակայն, չի ուզում պսակուել: Թագաւորի առջեւ պայման է դնում, որ կը պսակուի միայն այն դէպքում եթէ իրեն բերեն երեք հատ ոսկէ սինի, ամէն մէկի մէջ՝ ոսկէ կաքաւ եւ ոսկէ մաղա, ոսկէ հաւ եւ ոսկէ աքլոր, ոսկէ շուն եւ ոսկէ աղուէս: Թագաւորն իր ոսկերչին կանչում է, որ նա պատրաստի աղջկայ ուզածը, հակառակ դէպքում՝ գլուխը կը կտրի: Ոսկերչին ինչ անում է, չի կարողանում գործը գլուխ բերել: Նրա աշակերտը (նոյնինքն թագաւորի կրտսեր տղան էր) աղջկայ տուած թալիսմանի օգնութեամբ, ձեռք է բերում երեք սինիները: Ոսկերչը տանում, տալիս է թագաւորին: Ապա նրա աշակերտն իր մօտ եղած կարմիր ձիու մազը կրակին է տալիս, ձին յայտնւում է առջեւը: Հեծնում, գնում է թագաւորի պալատի առջեւ ջիրիդ խաղալու: Ջիրիդով ուժ խփում, փռում է գետնին: Բոլորը փախչում են: Այս մասին իմաց են անում թագաւորին, որը գալիս հարցնում է թէ ինչ մարդ է նա: Այդ ժամանակ, տղան պատմում է իր գլխով անցածը: Թագաւորը դահիճներին հրամայում է գլխատել աւագ որդիներին, բայց կրտսերը չի թողնում: Ասում է.

- Նրանք ինձ մոլեխանաթութիւն արեցին, ես չեմ անի: Աստուած թող նրանց բարին տայ:

Այստեղ տղան ամուսնանում է իրեն սպասող աղջկայ հետ եւ ուրախ հարսանիք են անում:

Ինչպէս տեսանք, ուսական եւ հայկական հեքիաթները ծերունի արքայի «աչքերի դեղ» են համարում խնձորը, որն ինքնին արդէն դիցարանական հաւատալիքների կարգին է առնչւում: Ազգագրագէտ Գարեգին վրդ. Սրուանձտեանցը (1840-1892) պատմում է հայկական մի հաւատալիքի մասին, ըստ որի, Համբարձման տօնի առաւօտեան, Վասպուրականի Ազնաւորաց բերդի մերձակայքում վազող գետի բուն ակում անմահական, աստուածային խնձոր էր յայտնւում: Ո՛վ վաղ արշալոյսին գալիս էր այդ աղբիւրի մօտ, ձեռքը կարկառում որ վերցնի, խնձորը չբանում էր: Այդ աղբիւրի ակը սուրբ էր համարւում եւ չէր թոյլատրւում պղծել՝ ջուր վերցնելով: Խնձորն, առհասարակ, հնում կապւում էր անմահութեան հետ, որն ընկալւում էր պտղաբերութեան՝ յաւերժ սերնդափոխութեան գաղափարի մէջ: Հայ հեքիաթներում յաճախ է խօսւում այն մասին, որ թափառաշրջիկ դերվիշը

խնձոր է տալիս անպտուղ մարդկանց, որոնք՝ ուտելով, զաւակ են ունենում⁶։ Հին Հռոմում տղամարդու ամորձիները երբեմն «խնձոր» էին անուանում։ Գերմանիայում «խնձոր» էին ասում կանացի ստինքներին։ Հին Յունաստանում խնձորը սիրոյ ղեցուհի Աֆրոդիտէի բնորոշիչներէից էր⁷։ Խնձորի պատկերը երբեմն թագաւորական թագի ու գաւազանի զարդ է ընտրուել։ «Խնձոր» է կոչուում եկեղեցական սրբազան խաչից ներքեւ գտնուող գունդը։ Այն ունի բուժիչ յատկութիւններ։ Հայր Ղեւոնդ վ. Ալիշանը (1820-1901) գրում է. «...գլխնորն եփեն եւ ծեծեն եւ դնեն ի վերայ աչիցն՝ զաչքն յուժովցընէ եւ զցաւն տանի, եւ զսիրտն յուժովցընէ եւ ուրախ առնէ...»⁸։ Հայ ժողովրդական «Անջիգեար մէր» հեքիաթում անմահութեան խնձորները վիշապներն են հսկում⁹։

«Ժողովրդական առասպելներու մէջ մէկը հորը նետելը կամ իջեցնելը շատ անգամ սպաննել կամ սանդարամետ իջեցնել կը նշանակէ», - ասում է բանասէր Հ. Աղեքսանդր վրդ. Մատիկեանը (1886-1930)¹⁰։ Ռուսական հեքիաթում, ինչպէս տեսանք, հերոսին նետում են հորը, ուր մարդիկ շատ տխուր են եւ գործ ունեն կրակի հետ։ Յիշենք, որ տխուր էր նաեւ Հոմերոսին վերագրուող հին յունական *Ողիսական* էպոսում հանդերձեալ աշխարհ այցի եկած Ողիսեւսի հանդիպումը Աքիլլէսի ստուերի հետ։ Վերջինս գերադասում էր խեղճ գիւղացի լինել երկրի վրայ, քան թագաւոր՝ տարտարոսում¹¹։ Իսկ ընդերկրեայ կրակի մասին խօսւում է նաեւ հայկական «Անմահական խնձորը» հեքիաթում։ Հայկական հեքիաթը մեզ հետաքրքրում է այնքանով, որ նկարագրում է հորը նետուած հերոսի արկածները ստորերկրեայ աշխարհում։ Յատկանշական է, որ ռուսական հեքիաթում, ինչպէս եւ հայկականում, հերոսին մուլթ աշխարհից լոյս աշխարհ է հանում արծիւը՝ նոյն «զմռուտ ղուշը», որը հայ հաւատալիքներում յաճախ նաեւ «սինամահաւք», «սիմուրգ հաւք», «սերբանդ հաւք» է անուանւում եւ ապրում է Սասունի Սիմ լեռան գագաթին։ Լեզուաբան Գրիգոր Ղափանցեանը (1887-1957) «Սիմ» անունը բխեցնում է սեմական Սին լուսնի աստուածութիւնից¹²։ Բայց մենք չենք բացառում, որ Սիմ լեռն ունեցած լինէր իր բնիկ աստուածութիւնը, քանզի Սասունի Անթանիա վանքը կառուցուած էր հենց այդ լեռան վրայ¹³, ամենայն հաւանականութեամբ՝ հին հայկական հեթանոսական տաճարի տեղում։

Թէեւ վանեցիների բարբառով «սինամահաւքը» սիրամարգն է¹⁴, սակայն հիմքեր կան պնդելու, որ նախասկզբնական շրջանում նա իբրեւ արծիւ է պատկերացուել։ Հայկական հաւատալիքի համաձայն, «առաւօտեան, երբ արեւը դուրս է գալիս ծովից՝ երկրին շատ մօտիկ է լինում, ջերմութիւնը սաստիկ։ Նա կարող է այրել ու մոխիր դարձնել երկիրը, եթէ դէմը դուրս չգայ մի մեծ թռչուն, որն իր հսկայական թե-

ւերով հովանի է անում երկրին, մինչեւ արեւը բարձրանում է երկնքի մէջտեղը, հեռանում երկրից, որով պակասում է նրա ջերմութիւնը: Թռչունի թեւերը խանձւում են. նա կիսակենդան ընկնում է ծովի մէջ, գովանում, բուժում թեւերը եւ միւս առաւօտը կազդուրուած նորից դուրս է գալիս արեւի դէմ՝ երկրին հովանի անելու»¹⁶: Հնդարիական դիցաբանութեան մէջ արեւին առնչուող, Արունա անունով մի առասպելական թռչուն (արծիւ) կայ, որը մէկ այլ՝ Գարուդա արծուի հետ, արեւի ուղեկից (կամ արեւի խորհրդանիշ) Սուպարնա գոյգն է կազմում¹⁷: Սուրեա արեւին հետապնդում է չար դեւ Ռահուն: Ցասումով բռնուած, արեւը սպառնում է իր ճառագայթներով մոխրացնել ամբողջ աշխարհը: Աստուածները վախով են համակւում: Բրահմա Արարիչը Գարուդային կարգադրում է վերցնել եղբօրը՝ Արունային եւ տեղաւորել Սուրեայի կառքի մէջ, որպէսզի իր մարմնով ծածկի երկիրը՝ նրա այրող շողերից¹⁷: Հետաքրքիր է, որ համշէնահայերի հաւատալիքներում «մի վիշապ կայ երկնքում, որն ամէն օր, առաւօտեան, հետեւում է արեւին, որ բռնի ու կուլ տայ: Մինչեւ օրս նրան չի յաջողուել այդ բանը, բայց մի օր կը գայ եւ նա կուլ կը տայ»¹⁸: Խեթական Տեպիւնուի առասպելում Արունան անհուն երկնքի մարմնաւորում ուկիանոսն է, որն առեւանգում է արեւի աստծուն¹⁹:

Մեր կարծիքով, Արունա արծիւ-ծովը (ովկիանոսը) հանդիպում է նաեւ կարինցիների եւ վանեցիների հանելուկներից մէկում, որն իր Մանանա ժողովածուում հրատարակել է Սրուանձտեանցը.

«Հանք (հանելուկ - Գ.Մ.) մը ունիմ հանա հանա,

կոտոչուրներ մըսըրխանա.

կաթնաղբիւրէն ջուր կը խմէ,

Արընծովէն ձէն կը հանէ»:

Պատասխանը «ամպ ու որոտումն» է²⁰:

Այս հանելուկը մէջբերել է նաեւ բանագէտ Մանուկ Աբեղեանը (1865-1944)՝ Վահագնի առասպելը վերլուծելիս, եւ «արուն ծով»ը կապել է «արիւն ծով» հասկացութեան²¹: Մեր կարծիքով, «մըսըրխանա կոտոչուրներ» ունեցողը կա՛մ մեր ժայռապատկերներում հանդիպող ցլավիշապն է, կա՛մ է՛լ ցուլը: Երկուսն էլ կապւում են ամպրոպի եւ անձրեւի հետ: Իսկ այդպիսի եղանակի դէպքում, ինչպէս յայտնի է, ամպերն «արեւագոյն» եւ «ծիրանագոյն» չեն լինում, ինչպէս կարծում է Աբեղեանը²², այլ՝ գորշ ու մռայլ:

Յատկանշական է, որ Սրուանձտեանցի գրառած մի անվերնագիր հեքիաթում արծիւն ամէն տարի ձագ է բերում, իսկ վիշապը գողանում, ուտում է: Արծիւը, որ չգիտէ թէ ո՛վ է գողը, սրտի կսկծից թեւերով փակում է արեւի սկաւառակը եւ աշխարհն ընկղմում խաւարի

մէջ²³։ Նա, անկասկած, արեւի ուղեկից Արունա-Չմուտ ղուշ-երկինք-ով կիրանոսն է։

Ուշագրաւ է այն փաստը, որ Սասնայ ծռեր էպոսի պատումները մէկում Քառասուն-Ճիւղ Ծամ Դեղձունը, որը նոյնինքն արեգակն է, Սասնասարին ամուսնութեան առաջարկով «Թուղթ» է ուղարկում իր «սերբանդ հաւք»ի միջոցով²⁴։

Հնարաւոր է, որ այս առասպելական թռչունը նոյն Փիւնիկն է, որի մասին յունական աղբիւրներն ասում են թէ արծուի տեսք ունի, փետուրների հրաշեկ, հոյակապ գունաւորում։ Սա՝ իր վախճանը կանխագուշակելով, իր իսկ բնում ինքնահրկիզւում է, իսկ սերմից ծնւում է նոր թռչուն²⁵։ Հայկական հաւատալիքում էլ, ինչպէս տեսանք, արեւի դէմ դուրս եկող մեծ թռչունն ամէն առաւօտ հրկիզւում, կիսակենդան ընկնում է ու ապա նորից կազդուրւում է, յառնում։

Հայկական, դադստանեան եւ ռուսական հեքիաթների հետ ծանօթութիւնն այն մտքին է յանգեցնում, որ «Արա Գեղեցիկ» աւանդավէպի Արան կապուած է հնդիրանական Տրիտայի կերպարին։ Հնդարիական դիցաբանութեան մէջ Տրիտան մի դէպքում ըիշի է²⁶։ *Ռիգվեդ* աշուտ ասում է, որ նա առաջին գոհաբերութիւնն է կատարել, իսկ ինդրային մատուցել է սոմա անմահութեան ըմպելիք։ Կայ մէկ այլ Տրիտա՝ երեք եղբայրներից կրտսերը, որին աւագները նենգաբար ջրհորն են գցել։ Յայտնի է նաեւ Տրիտա Ապտեա աստուածութիւնը՝ որը կապուած է ջրերի, երկնքի եւ կրակի հետ (նստում է գետերի մէջ, սանձում է արեւ-նոյգին, երկնքում բորբոքում է կրակը, եւլն)։ Նա՝ գերագոյն աստուած ինդրային օգնելով, անդամահատում է Վրիթրա վիշապին²⁷։

Տրիտայի մասին փոքր-ինչ աւելին են ասում իրանական տուեալները։ Իրանական դիցաբանութեան մէջ Տրիտան (Ֆրիտան) երրորդ մարդն է, ով պատրաստել է հառմա ըմպելիքը (սոմայի գուգահեռը)։ Աւեստայում առաջին բուժողն է²⁸ եւ մէկը՝ փառապանծ Փառադատաներից, որոնք իրանական առասպելներում կազմում են երկրի վրայ գոյութիւն ունեցած առաջին հերոսական դինաստիան, որը քաղաքակրթութիւն տարածեց մարդկանց մէջ²⁹։ Իրանական աղբիւրների հիման վրայ նոյնպէս ենթադրւում են, որ Տրիտան առասպելական ինչ-որ երեք եղբայրներից երրորդն է՝ կրտսերը, որին եղբայրները դաւաճանաբար գցել են ջուրը (թերեւս՝ ջրհորը կամ հորը), որից յետոյ յայտնուել է երրորդ՝ ստորգետնեայ աշխարհում։ Այստեղ նա կենդանի ջուր է ձեռք բերել (բուժիչ միջոց), ինչի շնորհիւ հնարաւորութիւն է ստացել լոյս աշխարհ դուրս գալ³⁰։ (Յիշենք, որ ռուսական հեքիաթում եւս հեռաւոր թագաւորութիւնում, ուր անմահութեան խնձորենին էր աճում, ջրհորի մէջ կենդանի ջուր կար։)

Տրիտան իրանական դիցաբանութեան մէջ համատեղուում է Տրայտառնի կերպարին: Տրայտառնը սպանում է եռագլուխ վիշապ Ափի Դահակին (Չհահակին) եւ ազատագրում Ջամշիդի (Հիմայի՝ առասպելական նախամարդու) քոյրերին (կամ դուստրերին)³¹:

Տրիտայի մասին Ջրադաշտին պատմում է Հաոմա աստուածը³², նրան անուանելով «Սամերի ցեղից ուժեղագոյնը»: Համարւում է, որ նրա կերպարին է յանգում Ռոստամ Ջալի նախնի, դիւցազուն Իսրիթը³³: Պարսիկ միջնադարեան բանաստեղծ Ֆիրդուսին, որն իր *Շահնամէն* գրել է պահլավական հին ձեռագրերի հիման վրայ, յիշատակում է, որ Ռոստամը սերում էր արիածին Նարիմանից: Նարիմանը Սամի հայրն էր, Սամը՝ Ջալէրի (Դեստան Ջալի), Ջալէրը՝ Ռոստամի³⁴: Մասնայ ծռեր էպոսի «Մասնայ ծռեր» պատմում (պատմել է Վարդան Մուխսի-Բագրիկեանը, գրի է առել Սենեքերիմ Տէր-Յակոբեանը) ասւում է.

«Մէկ քանի մ'ժամանակ վերայ ընցաւ,
Դալու (ծուռ - Գ.Մ.) Բաղդասար ելաւ ըռըկաւ,
Իրթուղ, գնաց Իրան-Թուրանա մէջ.
Հանտէ ուր խամար փսակուաւ:
Անու տղէնիր ելան եւ մ'էլ կռապաշտ.
Ելաւ Կալէ Կալան, ելաւ Ջալ. Ջալից ելաւ Ռոստամ:
Ռոստամ ուրը կ'ըսին Բաղդասարը՝ ցեղից»³⁵:

Որ Ռոստամը սերուած է Մասնայ տան խոյրից, չատ լաւ երեւում է նաեւ Սրուանձտեանցի գրառած «Սալմանն ու Ռոստոմն» հեքիաթից³⁶: Ռոստոմն իր հօր՝ Ջալի վրէժը Սալմանից առնելու համար (Սալմանը Ջալի ականջը մեխել էր սիւնից), հետը վերցնում է իր «քեռու լաճ Վրժանին» ու գնում է նրան գտնելու: Հեքիաթն ասում է. «Վրժան ալ պզտիկ բրդուճ չէր ու ափսոս ձայնեղ էր, որ երբոր բոռար, արեւելքէն արեւմուտք կը լսուէր»: Ճանապարհին, Վրժանի գոռոցից դեւերը սարսափահար են լինում ու փախչում: Մի անգամ էլ Ռոստոմը քնի մէջ լսում է Վրժանի գոռոցը, թէ՛ «հասիր, Ռոստոմ, Սալման գիտաւրաւ»: Կասկածից վեր է, որ այստեղ Վրժանը հայ էպոսի Ջէնով Օհանն է:

Ըստ երեւոյթին, *Շահնամէի* յայտնի «Նարիման» անունը ստուգաբանելիս, պէտք է հասկանալ Նարի (հին հայոց մայր աստուածուհի Ծովինարի) մանուկ՝ Նարի գաւակ: Մեզ «Մանասար»ի բառացի պատճինումն է թւում ռուսական *Իլիա Մուրոմէց* էպոսի «Սվիատոգոր» անունը: Ստուգաբանելու դէպքում ստանում ենք՝ «Մանասար» - սան (արեւ, սրբութիւն)³⁷ եւ սար, Սվիատոգոր — sviataia gora (սուրբ սար) կամ svetiaschaia gora (լոյս տուող սար) գոլգահեռները:

Վրացական Ամիրանիանի էպոսի հերոս Ամիրանը վիշապասպան է, ինչպես հայոց Սանասարը: Նրա որոտընդոստ քայլերից սարսափում են վիշապները: Հիմնական գործառույթը վիշապներին ոչնչացնելն է: Ունի հրեղեն, թեւաւոր ձի եւ երկուորեակ եղբայրներ: Նրան մուկ աշխարհում օգնում է արծիւը, ինչպէս եւ մեր ուսումնասիրուող հեքիաթների հերոսին: Նրա երկուորեակ եղբայրներն աւելի թոյլ են իրենից, ինչպէս Բաղդասարը՝ Սանասարից³⁸:

Ամիրանի կերպարը հանդիպում է Գ.ա. Գ. հազարամեակի պեղածոյ նմուշներում (Մցխէթից յայտնաբերուած բրոնզէ գօտու, տրիալետեան արծաթէ գաւաթի վրայ եւլն.): էպոսի աբխազական տարբերակում, նա անաղարտ յղութեան ծնունդ է (ինչպէս եւ Սանասարը): Աստուածային ծագումը վկայում են ուսերի վրայ պատկերուած արեւը եւ լուսինը: Մարմնի որոշ անդամներ ոսկուց են: Նման է սեւ ամպի, ինչը յուշում է լեռան գաղափարը: Նրան, ինչպէս եւ հայկական էպոսի Փոքր Մհերին (արեգակնային Միհրին) հողը դժուարութեամբ է պահում իր վրայ: Ունի երկու եղբայր՝ Բաղրին (որի անունը, կարծես, հայոց Բաղդասարի աղաւաղուած ձեւը լինի) եւ Ուսիպին³⁹:

Սվիատոգորի ծանրութիւնը նոյնպէս հողը չի կարողանում տանել, սակայն ինքն էլ չի կարողանում հողի ծանրութիւնը տանել, որն ամփոփուած է խուրջինի մէջ: Փորձելով բարձրացնել այն, երկու ոտքով խրուում է հողի մէջ: Նա պառկում է լեռան վրայ, յաճախ ինքն էլ լեռ է: Բիլինաներից մէկում նա անուանւում է gorinich (= վիշապ)⁴⁰:

Այսպիսով, թէ՛ Սանասարը (Հին Կտակարանում նրա անունը յիշուում է Սարասար ձեւով), թէ՛ Ամիրանը (հակառակը կարդալիս, ստացւում է Նարիմա՝ «մա»՝ շումէրական ծնունդ իմաստով), թէ՛ Սվիատոգորը միեւնոյն նախնական դիցաբանական կերպարի վերադարձնումներն են: Նրանց անունները հաւանաբար ձեւաւորուել են ինչ-որ սուրբ լեռան նկատմամբ եղած պաշտամունքից:

Ռուսական հեքիաթի մի տարբերակում⁴¹ արքայի կրտսեր որդին երիտասարդացնող խնձորների եւ կենդանի ջրի ետեւից ճանապարհ ընկնելուց առաջ հօրից նոժոյգ է խնդրում: Հայրը նրան առաջարկում է վերցնել իր ախոռի 500 նոժոյգներից ո՛րը կը կամենայ: Որդին ձիերից որ մէկի մէջքին խաչով խփում է, նրա ծունկը ծալւում է: Ծարահատեալ, գնում է դաշտերում ձի փնտռելու: Հանդիպում է մի պառաւի, որը նրան խորհուրդ է տալիս լեռան վրայ անթաղ ընկած դիւցազուն հսկային թաղել: Նա ունի երկաթէ 12 դռների ետեւում, պողպատէ 12 կողպէքով, 12 շղթայով պահուող ձի եւ մի թուր, որը 4 հոգի պատգարակներով են տանում: Հերոսը տէրտէրներից թոյլտուութիւն է ստանում թաղել հսկային, որն էլ նուիրում է նրան իր ունեցածը: Այս պատկերները Մասնայ ծռեր էպոսից ընթերցողին քաջ ծանօթ են: Այդ Զէնով Օ-

հանն է, որ հորի մէջ ընկած Դաւիթին օգնութեան հասնելու համար, ձեռքը դնում է սպիտակ եւ կարմիր ձիերի մէջքին, բայց նրանք փորը տալիս են գետնին: Զեռքը դնում է սեւ, հրեղէն ձիու մէջքին եւ նա՝ ոտքի վրայ մնալով, խոստանում է, որ եթէ իր հեծուորը «մէկ ոտ թալես գանգուն, չուր մէկէլ ոտ շուռ տաս մէկէլ գանգուն, կը հասցնեմ Դաւիթի կռուին»⁴²: Այդ պատանի Դաւիթն է, որ Մարայ Մելիքի դէմ կռիւ գնալուց առաջ հանդիպում է արտատէր պառաւին, որն էլ խորհուրդ է տալիս իր մեռած հօր ամուր թաքցրած Գուռկիկ Զալալին հեծնել, թուր կէծակին առնել, նոր գնալ կռիւ⁴³: Այդ թուր կէծակին է, որ հասարակ մահկանացուն չի կարող տեղաշարժել եւ միայն Սասնայ ծովածին-արեգակնածին հերոսներն են ի գօրու բանեցնել:

Ինչպէս տեսանք, Լալայեանի «Արա Գեղեցիկ»ը համատեղում է հնդիրանական Տրիտալի կերպարին, որն իրանական դիցաբանութեան մէջ երրորդն է, ով արեւցուցիչ, անմահացուցիչ, երիտասարդացնող, թարմացնող ըմպելիք՝ համա է պատրաստել: Մենք պարզեցինք, որ Արա Գեղեցիկի փնտռած «աչքերի դեղը» խնձորն է: Հնդեւրոպական առասպելներում խնձորները (յաճախ՝ ոսկէ) անմահութիւն եւ երիտասարդութիւն էին պարգեւում: Յունական դիցաբանութեան մէջ Հեսպերիդների այգուց, ուր ոսկէ խնձորներն էր աճում, աղաւնիները Զեւսին աստուածային, անմահական ըմպելիք՝ ամբրոսիա էին տանում⁴⁴: Հին գերմանական առասպելաբանութիւնն անմահութեան խնձորները կապում էր պօէզիայի աստուած Bragi-ի հետ: Բառի նախաձեւը *b[h]reu «թափառել»ն է: Սակայն խօսքն ինչ-որ ըմպելիքի մասին է: Նախաձեւը ստուգաբանւում է որպէս «ըմպելիք պատրաստել»: Հին անգլերէնում՝ brēowan - «ըմպելիք եփել», հին գերմաներէնում՝ briuwan, լիտվերէն՝ birgelas - «գարեջուր»⁴⁵: Նախաձեւը, հնարաւոր է, ցոյց է տալիս որ խնձորը նոյնպէս հնագոյն ժամանակներում գործածում էին իբրեւ արեւցնող, անմահացնող ըմպելիք պատրաստելու միջոց: Սակայն դա ամենեւին չի նշանակում թէ համա առեղծոածային բոյսը հենց խնձորներն էր: Բայց դա խօսակցութեան առանձին, ընդգրկուն թեմա է:

Կասկածից վեր է, որ Լալայեանի «Արա Գեղեցիկ»ի նախատիպն առնչւում է Սասնայ ծոերէ կպոսին: Հնարաւոր է, որ նրա առասպելը պատմուել է հայ դիւցազներգութեան միջանկեալ ճիւղերից մէկում, որը մեզ ուղղակիորէն չի հասել: Բայց աւելի հաւանական է, որ այդ նախատիպը մէկն է Ծովինար աստուածուհու երկուորեակ զաւակներից, որոնք գուցէեւ սկզբնապէս երեքն են եղել: Եթէ Սանասարն է, եւ եթէ Զուարթի հայրը գօրավար Հաւլունի թուրը ծովն է գցել տալիս, ապա

միանգամայն տրամաբանական է, որ հայ էպոսում Սանասարը թուր կէծակին ծովից է հանում, դեւ-վիշապից փրկած իր տիկնոջ՝ Չուարթի-Քառսուն-Ճիւղ Մամ Դեղձուն-արեգակի խորհրդով: Բայց գուցէ եւ նա ամենեւին էլ Սանասարը չէ, այլ Բաղդասարը, իբրեւ կրտսեր եղբայր կամ՝ երրորդ եղբայրը, որի մասին մեզ չեն պատմում էպոսի ասագողները:

Իսկ ո՞վ է թաքնուած Շամիրամի կերպարի տակ: Ռուսական հեքիաթի մի տարբերակում⁴⁰, ինչպէս ասացինք, ոսկէ խնձորների տիրուհի, չքնաղ թագուհու ոտքերից եւ ձեռքերից 30 տարով երիտասարդացնող ջուր է հոսում: Այդ թագուհին գեղեցկուհիներից կազմուած իր զօրքով 9 օր քնում է եւ արթնանում: Երբ հերոսը, նրա քնած ժամանակ, վերցնում է հրաշալի, կենդանի ջուրը եւ հեռանում, թագուհին արթնանում եւ սարսափելի զայրանում է, ոտքերը խփում է գետնին եւ բամբ ձայնով որոտում: Հեծնում է իր արագավազ ձին եւ հետապնդում տղային, իսկ երկիրը դողում է հեծեալի եւ երկվարի ոտքերի տակ: Հասնում է նրան, սրով հարուածում եւ դիպչում է ուղիղ կրծքին: Ապա հիանում է նրա գեղեցկութեամբ, ճերմակ ձեռքը դնում է վէրքին եւ անմահական ջրով կենդանացնում: Այս տեսարանն անշուշտ, լուսնային, աստղազարդ եւ ամպամած երկնքի, հեծեալ, անձրեւաբեր, լուսնային աստուածուհու պատկերացումն է: (Դադստանեան Շահ-Դշխուհու ճակատին փայլող աստղն էլ վկայում է, որ խօսքը գիշերային աստուածուհու մասին է): Նրա սուրը կաթակն է, զայրոյթը՝ երկնային որոտը: Պատկերը շատ է յիշեցնում հայոց մայր աստուածուհի Ծովինարի նկարագրութիւնը. «նա ձիավարում է կամ, ինչպէս ասում են՝ խաղում, պարում է ամպերի մէջ մի հրեղէն ձիու վրայ: Նրա ձիու եւ առաւել եւս իր սեփական աչքերից կրակ է ցայտում: Նրա հրեղէն, լուսաւոր դէմքին ոչ ոք չի կարող նայել, քանզի նա միշտ քօղ է կրում»⁴⁷: «Մութ, ականակիր գիշերներին, յանկարծակի, հանում է գլուխը ամպերի տակից... վայրկեանական լոյսով լուսաւորելով ամբողջ աշխարհը՝ սար, ձոր եւ անտառ»⁴⁸: Մասնայ ծռեր էպոսի Սանասար եւ Բաղդասար պատմում (պատմել է մոկացի Սախօն, գրի է առել Սարգիս Հայկունին), երբ Սենեքերիմ թագաւորի հարկահանները գալիս են հայոց աշխարհ եւ «թագաւորու քոչկու սարի առջէն, որ կ'ընցնեն, լուսմ անունց իրեւաց. ըրչկընն, ի՞նչ տընըն՝ անցկուն խորոտ աղջիկ մ'իրեւաց, արեւուն կ'ըսէր. «Դու դուս մ'ըլլիր, իս դուս ըլլիմ»: Աղջիկ ընցկուն խորոտ, վուր տընուհորս հաւուր լուսնրկի կը նմանի, վուր եօթ սարի խտեւէն դուս կու գայ»⁴⁹: Ակնյայտ է, որ այստեղ Ծովինարը նոյնացուել է լուսնին: Այդ ամէն ինչի նախամայր Ծովինարն է հրապուրում իր գաւակներից կրտսերի գեղեցկութեամբ ու

խիզախութեամբ, այդ նա է ծերունի արքայի «աչքերի դեղ» - հրաշք խնձորների այգու պահպանը:

Արա Գեղեցիկի «խակական նկարագիրը բոլորովին մթագնած եւ հնութեան եւ մթութեան կեղեկով պատուած է: Համեմատական քննութիւնը միայն կրնայ աւերը գէթ չափով մը շտկել եւ նախնականը գէթ մերձաւոր գծերով մատնանիշ ընել», գրել է Մատիկեան իր *Արայ Գեղեցիկ* ընդարձակ մենագրութեան մէջ⁵⁰: Յայտն գիտական աշխարհում Արայի կերպարի «նախնականը գէթ մերձաւոր գծերով մատնանիշ անելու» հարցում ցուցաբերած հիմնական միտումն այն է, որ նա համարուում է մեռնող եւ յարութիւն առնող աստուած: Մինչդեռ Լալայեանի աւանդավէպում Արայի այդ յատկանիշի վերաբերեալ հեռաւոր ակնարկ անգամ չի նշմարուում: Ընդհակառակը, Արան գարնանը մեռնում է, չնայած այն հանգամանքին, որ հին աշխարհից յայտնի բոլոր մեռնող եւ յառնող աստուածներն էլ տարուայ այդ եղանակին յարութիւն են առնում⁵¹: Աւելին, ինչպէս խորենացու եւ Անանունի մօտ, այնպէս էլ այս գրոյցում, իսօք չկայ նրա յարութիւն առնելու մասին: Վիճարկելի կարող է համարուել, թերեւս այն հանգամանքը, որ Արան «զմռուտ դուշ»ի կամ վաճառականի օգնութեամբ փրկուում է հանդերձեալ աշխարհից, բայց դա բաւական չէ նրան մեռնող եւ յարութիւն առնող աստուած համարելու համար, քանզի հորը նետուած եւ լոյս աշխարհ ելած կերպարների կարելի է հանդիպել նաեւ հայկական այլ հեքիաթներում, որոնք միանգամայն այլ մոտիւններ են ներկայացնում: Ամէնակարեւորը՝ չի նկատուում Արա Գեղեցիկի կապը բոսականութեան հետ, ինչը փաստուած է հին աշխարհի բոլոր մեռնող եւ յարութիւն առնող աստծոյ կերպարներում:

Ռազմի դաշտում Արայի սպանութիւնը հնարուած է, նրա եւ նրանով հրապուրուած կնոջ անունը՝ նոյնպէս: Ինչպէս հեքիաթների սիւժէներն են ցոյց տալիս, Շամիրամի նախատիպը պատերազմի դուրս գալուց յետոյ ամուսնանում է: Աւելին, պատերազմը չի էլ կայանում: Ակնյայտ է, որ Լալայեանի գրառած պատումն արհեստականօրէն նմանեցուել է խորենացուց եւ Անանունից աւանդուած սիւժէին: Ըստ երեւոյթին, դրա համար հիմք է ծառայել այն ընդհանրութիւնը, որ պատմական Շամիրամն էլ իր զօրքով եկել էր Արա Գեղեցիկի սիրուն տիրանալու համար: Այս տեսակէտի դէմ հակափաստարկ կարող է ծառայել սոսկ այն հանգամանքը, որ ծերունի արքայի «աչքերի դեղ»ը գտնուում է Շամիրամի հրաշք այգում, ինչը յիշեցնում է ասորի թագուհու կախովի պարտէզները, որոնք աշխարհի եօթ հրաշալիքներից մէկն են համարուել: Բայց այդ զուգահեռն, ինչպէս տեսանք՝ թուաց-

եալ է: Նրա կերպարի տակ հին հայոց գերամեծար մայր աստուածուհին է թաքնուած:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ «Արա Գեղեցիկ, աւանդակէպ», գրի առաւ Ե. Լալայեան. տե՛ս՝ Ազգագրական հանգէս, եօթներորդ տարի, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 144-159:
- ² Skazki narodov Severnogo Kavkaza (Հիւսիսային Կովկասի ժողովուրդների հեքիաթներ), Ռոստով, 1959, էջ 241:
- ³ Narodnie russkie skazki A. N. Afanaseva (Ա. Ն. Աֆանասևի ռուսական ժողովուրդական հեքիաթները), Մոսկուա, 1985, հտ. I, էջ 349-374:
- ⁴ Տիգրան Նաւասարդեան, Հայ ժողովրդական հեքիաթներ, Տիֆլիս, 1882, գիրք 2րդ, էջ 1:
- ⁵ Գարեգին Սրուանձտեանց, Երկեր, հտ. 1, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1978, էջ 392:
- ⁶ Ռոզա Գրիգորեան, «Գեղարքունիք», Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտ. 14, Երեւան, 1983, էջ 84-92, 150:
- ⁷ E. G. Kagarov, Kult fetishei. rastenii i zhivotnikh v drevnei Gretsii (Ֆետիշների, բոյսերի եւ անասունների պաշտամունքը հին Գունաստանում), Սանկտ Պետերբուրգ, 1913, էջ 164:
- ⁸ Հայր Դեմոնդ վ. Ալիշան, Հայ բոլսակ կամ հայկական բոլսաբանութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, 1896, էջ 253:
- ⁹ Նաւասարդեան, Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան, 1889, գիրք 5րդ, էջ 36:
- ¹⁰ Դոկտ. Հ. Աղեքսանդր վ. Մատիկեան, Արայ Գեղեցիկ. համեմատական-քննական ուսումնասիրութիւն, Ազգային Մատենադարան, ՃԻՁ., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1930, էջ 41:
- ¹¹ Հոմեոթոս, Ողիսական, հին յունարէնից թարգմանեց Համազասպ Համբարձումեանը, Երեւան, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, 1988, էջ 178-179:
- ¹² Գրիգոր Դափանցեան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երեւան, ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի հրատարակչութիւն, 1944, էջ 20:
- ¹³ Վարդան Պետոյեան, Սասնայ ազգագրութիւնը, Երեւան, 1965, էջ 381:
- ¹⁴ Սրուանձտեանց, էջ 347:
- ¹⁵ Արամ Ղանալանեան, Աւանդապատում, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1969, էջ 3-4:
- ¹⁶ Mifi narodov mira (աշխարհի ժողովուրդների առասպելները), հտ. II, Մոսկուա, 1992, էջ 477:
- ¹⁷ Նոյն, էջ 478:
- ¹⁸ Թ. Մուրադեան, Համէլէնցի հայեր, Թիֆլիս, 1910, էջ 80:
- ¹⁹ T. Gamkrelidze i Viacheslav Ivanov, Indoeuropeiskii yazik i indoeuropeitsi (հնդեւրոպական լեզուն եւ հնդեւրոպացիները), Թբիլիսի, 1984, էջ 563:
- ²⁰ Սրուանձտեանց, էջ 276:
- ²¹ Մանուկ Աբեղեան, «Հայ վիպական բանահիւսութիւն», Երկեր, հտ. Ա., Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1966, էջ 77:
- ²² Նոյն:
- ²³ Սրուանձտեանց, էջ 195:
- ²⁴ Աբեղեան, հտ. Ա., էջ 415:
- ²⁵ Mifi narodov, հտ. II, էջ 560:

²⁶ Րիշինները *Ռիգվեդայի* հիմների ստեղծողներն էին:

²⁷ *Mifi narodov*, հտ. II, էջ 525:

²⁸ Նոյն, էջ 526:

²⁹ Նոյն, էջ 285:

³⁰ Նոյն, էջ 526:

³¹ Համարում է, որ այս առասպելի հիմքում պատմական փաստ է ընկած, ըստ որի, Ֆարիդուն-Տրայտաոնը սպանել է արարական արքայազն, օտար նուաճող, բռնակալ Ջոհակին: Հայ աղբիւրներում Տրայտաոնը համընկնում է Տիգրան թագաւորի, իսկ Ափի Դահակը՝ Ափահակի կերպարներին: Ենթադրում է նաեւ, որ այս վիշապի սպանութիւնն իրանցիների հետ կապուած է նոր տարուայ դարստեան առնչուող հաւատալիքներին, երբ ազատագրւում են ջրերը, դադարում է երաշտը եւլն: (*Mifi narodov*, հտ. II, էջ 523): Կարծիք կայ նաեւ թէ Տրիտան եւ Տրայտաոնը իրարից տարբեր պատմական դեմքեր են (*Avesta. Izbrannie gimni iz Videvgata* (Աւեստա. ընտիր օրհներգեր Վիդեւգատայից), աւեստայերէնից թարգմանութիւնը՝ Իււան Ստերլին-Կամենսկու, Մոսկուա, 1993):

³² Զրադաշտականների կանաչաշէնայ Հաոմա աստուածը բուժում էր մարդկանց, պաշտպանում՝ անասուններին, կանխում էր երաշտը եւ սովը (*Mary Boyce, Zoroastrii. veronaviia i vobichai* [զրադաշտականներ, հաւատալիքներ եւ սովորութիւններ], Մոսկուա, 1998, էջ 12):

³³ *Mifi narodov*, հտ. II, էջ 526:

³⁴ Ֆիրդուսի, *Շահնամէ*, Երեւան, 1975:

³⁵ Մասնայ ծուր, խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբեղեան, աշխատակցութեամբ՝ Կարապետ Մ. Օհանջանեանի, Երեւան, Պետական հրատարակչութիւն, 1938, էջ 546:

³⁶ Սրուանձտեանց, էջ 464-465:

³⁷ Հնդեւրոպական մի շարք լեզուներում «արեւ» բառը *sun* (կամ *son*) արմատով է դրսեւորւում: Այսպէս, միջին ուսերէնում՝ *sunno*, հին գերմաներէնում՝ *sunna* (գերմաներէնում՝ *sonne*), հին անգլերէնում՝ *sunne* (անգլերէնում՝ *sun*), հին հնդկերէնում՝ *śōṇa* (լուսաբաց) (*Gamkrelidze i Ivanov*, էջ 684):

³⁸ Յարութիւն Մարտիրոսեան, *Գիտութիւնն սկսւում է նախնադարում*, Երեւան, «Սովետական գրող», 1978, էջ 34:

³⁹ *Mifi narodov mira*, հտ. I, Մոսկուա, 1991, էջ 68:

⁴⁰ Նոյն, էջ 421:

⁴¹ *Narodnie russkie skazki*, էջ 364:

⁴² Մասունցի Դաւիթ, Երեւան, «Լոյս», 1981, էջ 235-236:

⁴³ Նոյն, էջ 219:

⁴⁴ *Mifi narodov*, հտ. II, էջ 258:

⁴⁵ *Gamkrelidze i Ivanov*, էջ 643:

⁴⁶ *Narodnie russkie skazki*, էջ 355:

⁴⁷ Մանուկ Աբեղեան, «Հայ ժողովրդական հաւատքը», *Երկեր*, հտ. Է., Երեւան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատարակչութիւն, 1975, էջ 70:

⁴⁸ Գրիգոր Բալասանց, *Ռոստոմ եւ Սալման*, Թիֆլիս, 1896, էջ 7:

⁴⁹ Մասնայ ծուր, էջ 307-308:

⁵⁰ Մատիկեան, էջ 173:

⁵¹ James Frazer, *Zolotaia vetv. Umiraiushchie i voskresaiushchie bogi rastitelnosti* (ոսկեայ ճիւղ. բուսականութեան մեռնող եւ յառնող աստուածներ), թողարկւում III, Մոսկուա, 1992:

GAGIK MARTOYAN

The author highlights the mythological concepts of some ancient peoples through a comparison of the popular fairy tale called "Ara geghetsik" with fairy tales of Daghestani and Russian origins, as well as with several other Armenian fairy tales with similar themes. The fairy tale was first transcribed by the renowned ethnographer Yervand Lalayan and published in 1902. In his analogy, the author relies on Indo-Iranian and Indo-Arian literary sources and relevant mythological characters, as well as goddesses symbolizing darkness, eternity, life and death.

The fairy tale is about an ailing king whose eyesight is weakened by age. The king sends his three sons to find the apple that will cure his eyesight. Only the youngest son succeeds in getting the apple, so his envying brothers throw him into a well which has a gate to the "dark world" or the underworld. The young hero kills the devils that have threatened that "dark world". The grateful king of this underworld in response helps him return to his country.

Other similar fairy tales differ in details: the ailing king's eyesight or health; the apple; the queen who owns the apple; the relationship established between her and the youngest hero; the dark world; the devils or the dragons; the way the hero returns to his fatherland.

Through identifying the different characters of these fairy tales with the mythological, legendary figures and gods and goddesses of these peoples, Martoyan draws parallel lines between them, their characteristics and their functions, thus highlighting some of the very basic concepts these ancient people had regarding the perception of daylight and night, the magic powers of nature certain animals and trees.

